Տ. ՈՍԿԱՆ ՔՀՆ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ Բ. ԺՈՂՈՎ[1]

(11-13 նոյեմբերի, 2014 թ.)

2014 թ. նոյեմբերի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, սկսվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը:

Եպիսկոպոսաց ժողովի մասնակիցները նոյեմբերի 10-ին, գլխավորությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Հայրապետները ծաղկեպսակներ զետեղեցին հուշահամալիրի մոտ, ապա անմար կրակի առջեւ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Հայոց Եղեռնի նահատակների հոգիների խաղաղության համար:

Ժողովին Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության 76 արքեպիսկոպոսներից ու եպիսկոպոսներից մասնակցում են 58-ը:

Մինչ բացման արարողությունը Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասը Մայր Տաճարում մասնակցեց Գիշերային ժամերգության՝ Ս. Հոգու առաջնորդությունը հայցելով ժողովի աշխատանքների բարի արդյունավորման համար:

Ժողովն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո բացման եւ ողջույնի խոսքով հանդես եկավ նախորդ Եպիսկոպոսաց ժողովի դիվանի համաատենապետ Գերաշնորհ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Այնուհետեւ ներկաներին իրենց հայրապետական պատգամը բերեցին Նորին Սրբություն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Նորին Սրբություն Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը:

---

1 Նյութը պատրաստելիս օգտվել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական կայքից (http://www.armenianchurch.org), որից վերցրած նյութերը փոքր-ինչ խմբագրելով՝ ներառել ենք հոդվածում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Եպիսկոպոսաց ժողովի առիթով

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս,

Գերաշնորհ Արամ արքեպիսկոպոս Աթեշյան, Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության,

Գերաշնորհ Սրբազան հայրեր,

Անհուն ուրախությամբ Մեր ջերմ ողջույնն ենք բերում Ձեզ եւ փառք ու գոհություն վերառաքում առ Բարձրյալն Աստված, որ վերստին շնորհը պարգեւեց մեր Ս. Եկեղեցու եպիսկոպոսաց դասի հետ համախմբվելու աստվածախնամ հովանու ներքո Քրիստոսակերտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Անցյալ տարի Եպիսկոպոսաց ժողովի գումարումը ոչ միայն նշանակալի իրադարձություն էր, այլեւ՝ կարեւոր ձեռքբերում եկեղեցական կյանքում, քանզի դարեր շարունակ ծանր ու դժվարին ժամանակների, անբարենպաստ իրավիճակների ու հանգամանքների, եկեղեցավարչական խնդիրների պատճառով հնարավոր չէր եղել կազմակերպել եպիսկոպոսաց դասի համախմբումը: Նախորդ ժողովական աշխատանքով մենք ունեցանք օգտաշատ քննարկումներ, ընդունեցինք եկեղեցական եւ ծիսական հարցերին առնչվող, սոցիալական բնագավառներին վերաբերող որոշումներ՝ ի նպաստ մեր Ս. Եկեղեցու առաքելության գործացման ու արդյունավորման եւ մեր հոգեւոր, ազգային ու հայրենական կյանքի առաջընթացի:

Եպիսկոպոսաց ժողովի պարբերաբար գումարումն անհրաժեշտ է եկեղեցական անդաստանում բարեփոխումներ իրականացնելու, մեր Եկեղեցու ընթացքը ժամանակի զարգացումներին համաքայլ պահելու, արդիական հարցադրումներին արձագանքելու եւ առկա հրամայականներին ու մարտահրավերներին համապատասխան՝ մեր Ս. Եկեղեցու տեսակետները նորովի բանաձեւելու եւ ներկայացնելու համար: Եպիսկոպոսաց ժողովի հրավիրումը կարեւոր է նաեւ մեր հոգեւոր-եկեղեցական գործունեությունը գործացնելու եւ ավելի արդյունավորելու համար, որպեսզի մեր ժողովրդին անսայթաք պահենք ու պահպանենք հավատքի ուղիներում եւ առավել ճանաչելի դարձնենք մեր Եկեղեցու Քրիստոսավանդ վարդապետությունը, եկեղեցական սրբազան ավանդույթները, ծեսերն ու տոները: Պատմության

փորձություններից հավատքով փրկված ժողովուրդ ենք, եւ այսօր էլ մեր հավատքը եւ հավատակերտ գործերը պիտի բարեգարդեն ու լուսավորեն ազգային-եկեղեցական մեր կյանքի անդաստանները եւ ապագայի մեր իղձերն ու տեսլականները:

Եպիսկոպոսաց այս ժողովի օրակարգում մենք անդրադառնալու ենք Ցեղասպանության զոհերի սրբադասման հռչակման արարողակարգին եւ ծիսական կանոնակարգին, Ս. Մկրտության խորհրդի բարեկարգյալ ծիսակարգին, որոնց շրջագծում դեռեւս կան վճռման կարոտ մի շարք հարցեր: Ուրախալի է, որ օրակարգում է նաեւ Կոմիտաս Վարդապետի սրբադասման գործընթացի ձեռնարկումը: Արդարեւ, Եկեղեցին զորանում է իր սրբերով, նրանց լուսավոր կյանքի մշտավառ օրինակով եւ երկինց օթեւաններում նրանց բարեխոսական աղոթքով: Ցեղասպանության զոհերի սրբադասումով նաեւ պիտի շարունակվի դարեր ի վեր մեր Եկեղեցում դադարած սրբադասման գործընթացը, իսկ Մկրտության կանոնի վավերացմամբ՝ ծիսաարարողական միօրինակությունը եկեղեցական մեր անդաստանում: Իրականացված հետեւողական եւ ջանադիր աշխատանքների համար գոհունակ սրտով Մեր բարձր գնահատանքն ենք բերում Կենտրոնական հանձնաժողովի, Սրբադասման եւ Ծիսական միասնական հանձնախմբերի անդամներին:

Մեր Ս. Եկեղեցին իրականացնելով իր գավակների հոգու փրկության եւ հավիտենական կյանք առաջնորդելու տերունապատվեր առաքելությունը՝ միաժամանակ կարեւորում է բարօրությունը այս կյանքի, ինչպես ուսուցանում է առաքյալը. «Աստուածապաշտութիւնը օգտակար է ամէն ինչի. եւ նա ունի կեանքի աւետիսը, ա՛յս կեանքի եւ հանդերձեալի» (Ա. Տիմ. Դ. 8): Հայ Եկեղեցին, ինչպես դարեր շարունակ, այսօր էլ ջանք ու նպաստ է բերում մեր Հայրենիքի զորացման, Սիյոնքի կենսունակության, մեր ժողովրդի խաղաղ կյանքի ու բարօր կեցության համար: Անվազ նախանձախնդրությամբ պիտի շարունակենք միջազգային հարթակներում անլռելի պահել մեր Ս. Եկեղեցու կոչը՝ հանուն Հայոց Ցեղասպանության համընդհանուր դատապարտման, Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքի ճանաչման, այլեւ՝ Սիրիայում, Իրաքում, ողջ Մերձավոր Արեւելքում խաղաղության վերահաստատման, կրոնական հալածանքների դադարեցման, քրիստոնեական համայնքների իրավունքների պաշտպանության: Արդի աշխարհին առաջնահերթորեն հուզում են

սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրները, քան հոգևորը՝ մարդ-Աստված հարաբերությունների անխաթար պահպանումը եւ համընդհանուր բարիքի համար աստվածահաճո կերպով ապրելու ձգտումները: Այս ընթացքները անխուսափելիորեն առաջնորդում են բարոյական ընկալումների խաթարման, ընտանիքի, մարդկային բարձր արժեքների վերաբերյալ հասկացությունների խարխլման, որոնցից, ցավոք, գերծ չէ նաեւ ազգային մեր կյանքը: Նման իրավիճակը շեշտում է հրամայականը Եպիսկոպոսաց ժողովի՝ առավել համակարգված եւ եռանդուն գործելու, ավելի նախաձեռնողությամբ Աստծո կենարար խոսքը մատուցելու մեր հավատավոր զավակներին, որպեսզի մեր ժողովուրդը հաստատուն լինի դեպի Աստված ընթացքներում եւ զորանա իր քրիստոնեական կյանքով, որով մեր իրականության շատ խնդիրներ պիտի հաղթահարվեն:

Աղոթքով առ Ամենակալն Աստված հայցում ենք Ս. Հոգու շնորհները եւ առաջնորդությունը սրբագումար այս ժողովին՝ համատեղ ու արդյունավոր ջանքերով լուծումներ գտնելու մեր Եկեղեցին հուզող խնդիրներին ու մարտահրավերներին: Թող Տերը Իր օրհնության ներքո հավետ շեն ու պայծառ պահպանի մեր Ս. Եկեղեցին Նվիրապետական իր Աթոռներով, խաղաղ, ապահով ու բարօր՝ Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրն ու աշխարհասփյուռ ժողովրդին:

«Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի Քո անշարժ պահեա. եւ զերկրպագուս անուանդ Քում պահեա ի խաղաղութեան»: Ամէն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի խօսքը Եպիսկոպոսաց ժողովի առիթով

Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունեմ մեր հոգեւոր եղբայր Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը,

Հայրական սիրով կ'ողջունեմ մեր Եկեղեցւոյ եպիսկոսաց դասը՝ հոգեւոր իշխանները, որոնք կոչուած են առաւել եւս կենսագործելու մեր Եկեղեցւոյ կեանքը:

Գոհութիւն ու փառք կու տամ Աստուծոյ, որ անգամ մը եւս մեր բոլորին այս հոգեպարար առիթը եւ սքանչելի պահը ստեղծեց, որպեսզի մենք միասնաբար մտածենք, աղօթենք, աշխատինք ու ծրագրենք, որպէսզի աւելիով պայծառացնենք մեր Եկեղեցին եւ հզօրացնենք անոր առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս: Ես ամէն բանէ

առաջ կ'ուզեմ ողջունել այս գեղեցիկ երեւոյթը մեր Եկեղեցւոյ կեանքէն ներս, երբ մեր հայրապետական գոյգ Աթոռներու Եպիսկոպոսաց դասը քով-քովի եկած, միասնաբար եղբայրական ջերմ սիրով կը տագնապին, կը մտածեն ու կը փորձեն մեր Եկեղեցւոյ ծառայութիւնը դարձնել աւելի ուժական, աւելի կենսունակ եւ ազդու: Պայմաններու բերումով, դարեր շարունակ մեր կաթողիկոսական երկու Աթոռները մնացին իրարմէ հեռու, գործեցին տարբեր մարտահրաւէրներու, տագնապներու եւ պայմաններու մէջ ու դիմագրաւեցին տարբեր հարցեր. սակայն հիմա, հազար փառք Աստուծոյ, մեր Աթոռները կոչուած են միասնաբար գործելու եւ միասնաբար ծառայելու մեր Եկեղեցւոյ ու մեր ժողովուրդին: Ահաւասիկ, հոգեպարար ու գօտեպնդիչ է այս երեւոյթը մեր ժողովուրդի կեանքէն ներս եւս, իրենց ներքին միասնականութիւնը հզօրացնելու, որովհետեւ մեր ազգին ու Եկեղեցւոյ ճամբան եւ նպատակը նոյնն է: Տարբեր պայմաններու մէջ ապրեցանք ու կ'ապրինք, տարբեր մտահոգութիւններ ունեցանք եւ ունինք, սակայն վերջին հաշիւով՝ մեր պատմութիւնը այսօր կը յուշէ մեզ, թէ մենք պիտի գործենք միասնաբար՝ նպատակասլաց կերպով, որպէսզի մենք՝ որպէս Եկեղեցի, հաւատարիմ գտնուինք մեր արմատներուն, մեր անցեալին, մեր պապերու նուիրական կտակին եւ այդ հաւատարմութիւնը մենք գործնապէս թարգմանենք մեր Եկեղեցւոյ ու ազգի ծառայութեան դաշտէն ներս: Ես այնպէս կը տեսնեմ, որ այսօր մեր Եկեղեցին կարիքը ունի երկու հիմնական առաջադրանքներու, որոնք պէտք է մեր մտածումներուն եւ մեր աշխատանքներուն մեկնակէտը, հիմքը, հունաւորումը եւ նպատակը դառնան:

Առաջին՝ մենք մեր Եկեղեցին պէտք է տանինք մեր ժողովուրդին: Յաճախ իմ խօսքերուս մէջ կարեւորութեամբ կը շեշտեմ, թէ եկեղեցին վայր չէ, եկեղեցին քարեղէն իրականութիւն չէ, Եկեղեցին առաքելութիւն մըն է, որ պէտք է երթայ մեր ժողովուրդին, եւ Եկեղեցին մեր ժողովուրդին տանողը հոգեւորականն է: Ի՜նչ մակարդակի վրայ ալ գտնուինք, հոգեւորականին կոչումը, Եկեղեցին՝ որպէս Քրիստոսի խորհրդական մարմինը, տանիլն է ժողովուրդին: Քրիստոս պիտի խօսի մեր Եկեղեցւոյ ճամբով, մեր ժողովուրդի կեանքին մէջ. մենք չէ որ պիտի խօսինք, զՔրիստոս պիտի խօսեցնենք մեր կեանքի վարքագծով, մեր խօսքով, մեր օրինակով, մեր ծառայութեամբ: Հետեւաբար, ինչպէ՞ս կարելի է այսօր մեր Եկեղեցին տանիլ մեր ժողովուրդին: Ծիսական բարեկարգութիւնը կենսական է: Մենք չենք կրնար այլեւս այն, ինչ որ անցեալէն ժառանգած ենք, նոյնը կրկնել.

պէտք է անցեալի մեր աւանդութիւններուն հաւատարիմ գտնուինք, բայց միաժամանակ ինչպէ՞ս կրնանք անցեալը ներկայով թարգմանել եւ ներկայ կեանքի մեր պայմանները իրականութիւնները կարեւորութեամբ նկատի ունենալ մեր ծիսական բարեկարգութեան աշխատանքներուն մէջ:

Երկրորդ՝ ինչպէ՞ս կարելի է մեր Եկեղեցին բանալ ներկայ աշխարհին: Համաշխարհայնացումը ի՞նչ է. սահմանները քանդուած են այսօր, մենք կ'ապրինք նոյն աշխարհին մէջ, շրջապատուած ենք տարբեր մշակոյթներով, տարբեր մտածողութիւններով. այս է համաշխարհայնացումը:

Մենք ինչպէ՞ս կրնանք մեր Եկեղեցին բանալ ուրիշներուն եւ ինչպէ՞ս կրնանք մեր դրացիներէն եւ ուրիշներէն մեզի եկող մարտահրաւէրները, տագնապները դիմագրաւել. այլ խօսքով՝ ընկերա-բարոյագիտական հարցերը մեր ժողովուրդի կեանքին ու մեր Եկեղեցւոյ առաքելութեան մէջ առաջնահերթ հարցեր են՝ ամենօրեայ հարցեր են, տագնապալից հարցեր են, այս հարցերու նկատմամբ մեր Եկեղեցին իր ըսելիքն ու ընելիքը ունի: Ի՞նչ մտածողութիւն պէտք է ձեւաւորենք եւ ունենանք այս հարցերուն գծով, մեր Եկեղեցին ի՞նչ կ'ըսէ, չենք կրնայ անտարբեր մնալ: Հետեւաբար, ընկերա-բարոյագիտական հարցերը մենք՝ որպէս Եպիսկոպոսաց ժողով, պէտք է մեր օրակարգին վրայ ունենանք յառաջիկայ տարիներու ընթացքին: Միաւասիկ, երկու հիմնական մտահոգութիւններ, որոնք պէտք է մղեն մեզ մտածելու եւ գործելու այնպէս մը, որ մեր Եկեղեցին այսօր միայն անկիւն մը մնացած աղօթավայր մը չդառնայ մեր ժողովուրդին զաւակներուն համար, այլ իրապէս վերածուի մեր ժողովուրդը կենսանորոգող, հոգեմտաւոր արժէքներով պայծառացնող եւ հարստացնող հաւատքի առաքելութիւն:

Վերջապէս, բոլորս ալ գիտենք, որ մենք կը գտնուինք հարիւրամեակի սէմին: Այս ուղղութեամբ, թէ բարձրագոյն մակարդակի վրայ՝ համահայկական մակարդակի վրայ, թէ գաղութներէն ներս, նախապատրաստական լուրջ աշխատանքներ կատարուած են, որպէսզի մենք՝ որպէս մէկ Եկեղեցի, մէկ ազգ, միասնաբար դիմագրաւենք այս կարեւոր դէպքը մեր ժողովուրդի կեանքէն ներս եւ մեր յանձնառու մասնակցութեամբ արժեւորենք զայն:

Յաճախ իմ խօսքերուս մէջ ես յիշած եմ եւ կրկնելու ձեւով շեշտած եմ, թէ մենք հարիւրամեակին առիթով պարզապէս անցեալի տխուր դէպքերուն յիշատակութիւնը պիտի չկատարենք, այլ խօսքով՝

միայն պիտի չյիշենք, այլ յիշելէն անդին աշխարհին պիտի յիշեցնենք, որ տակաւին իրաւագրկուած ժողովուրդ մը կայ, եւ այդ ժողովուրդը պահանջատէր է այսօր, իր իրաւունքները կը պահանջէ. մենք չենք կրնար լռել, երբ Արեւմտեան Հայաստանը, Կիլիկիան, մեր ազգապատկան եւ եկեղեցապատկան կալուածները տակաւին կը մնան բռնագրաւուած: Մենք՝ որպէս Եկեղեցի, եւ որպէս ժողովուրդ, չենք կրնար անտարբեր եւ լուռ մնալ այս կացութեան դիմաց. այսօր մենք պահանջատէր ենք, երբ կ'ըսենք մենք պահանջատէր ենք՝ Եկեղեցի եւ ազգ, մէկ ամբողջութիւն, Եկեղեցի, ազգ, Հայրենիք մէկ ամբողջութիւն են: Հետեւաբար, այդ մէկ ամբողջութեան ծիրէն ներս, ահաւասիկ, մենք պիտի նշենք հարիւրամեակը եւ այդ հարիւրամեակի ծիրէն ներս, ինչպէս քիչ առաջ Գարեգին Վեհափառ Հայրապետը յիշեց, սրբադասումը մեր նահատակներուն կարեւոր դէպք մըն է: Մենք կանգնած ենք պատմութեան դիմաց՝ որպէս մէկ Եկեղեցի, Վեհափառ Հայրապետներով, եպիսկոպոսաց դասով պիտի ըսենք՝ մեր նահատակները՝ մէկ ու կէս միլիոն նահատակները, Սուրբ են. անոնք արդէն իսկ սրբացուած են մեր ժողովուրդի կեանքէն ներս: Ահաւասիկ, այս մտածումներով եւ սպասումներով ես անգամ մը եւս ուրախութեամբ կ'ողջունեմ մեր Եպիսկոպոսաց ժողովի այս երկրորդ գումարումը եւ կը մաղթեմ, որ յաջողութեամբ պսակուին մեր աշխատանքները յառաջիկայ երեք օրերու ընթացքին:

Բացման արարողության ավարտին կազմվեց ժողովի դիվանը հետեւյալ կազմով. ատենապետներ՝ Գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյան եւ Գերաշնորհ Տ. Սեպուհ արք. Սարգիսյան, ատենադպիրներ՝ Գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Միրզախանյան եւ Գերաշնորհ Տ. Բաբկեն եպս. Չարյան:

Մինչ օրակարգում ընդգրկված հարցերի քննությունը, ժողովականներն աղոթք բարձրացրին Հայ Եկեղեցու անցնող տարվա ընթացքում ի Տեր հանգչած հոգեւոր սպասավորների հոգիների հանգստության համար:

Եպիսկոպոսաց դասը նաեւ շնորհավորեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին օծման եւ գահակալության 15-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով արեւշատ բազում տարիների հովվապետություն:

Նոյեմբերի 11-12-ի նիստերը նվիրված էին Հայ Եկեղեցում սրբադասման կանոնի եւ Հայոց Ցեղասպանության նահատակների սրբադասման գործընթացի հետ առնչված հարցերին: Այս առնչությամբ զեկույցներ ներկայացրեցին Սրբադասման հանձնախմբի անդամներ Գերաշնորհ Տ. Մուշեղ արք. Մարտիրոսյանը եւ Գերաշնորհ Տ. Բաբկեն եպս.Չարյանը:

Քննարկելով հանձնախմբի կողմից կատարված աշխատանքները՝ Եպիսկոպոսաց ժողովը հաստատեց Հայ Եկեղեցու սրբադասման ծիսակարգը եւ արարողակարգը:

Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությունը որոշվեց կատարել 2015 թ. ապրիլի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Որպես ամենամյա եկեղեցական հիշատակության տոնացուցային օր սահմանվեց ապրիլի 24-ը:

Ժողովն ընդունեց Հայոց Ցեղասպանության նահատակների ամենամյա տոնակատարության ծիսական կանոնը, որը ներառում է շարականի կանոնը եւ ժամամուտը, ինչպես նաեւ Հայոց Ցեղասպանության նահատակ սրբերի վկայաբանությունը: Որոշվեց վերջնական լրամշակումից հետո հիշյալ փաստաթղթերը որդեգրել:

Սրբադասման հանձնախմբին հանձնարարական տրվեց նաեւ ձեռնամուխ լինել անհատական սրբադասման համար անհրաժեշտ ուսումնասիրություններին՝ նկատի ունենալով Կոմիտաս վարդապետին եւ ուրիշ անհատների:

Նոյեմբերի 12-13-ի նիստերին Եպիսկոպոսաց ժողովի մասնակիցները քննության առան Հայ Եկեղեցու առաջին երկու խորհուրդների՝ Ս. Մկրտության եւ Ս. Դրոշմի առնչությամբ Ծիսական հանձնախմբի կողմից կատարված աշխատանքները: Այս կապակցությամբ Ծիսական հանձնախմբի համաատենապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, հանձնախմբի անդամներ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը եւ Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը ներկայացրեցին համապատասխան զեկույցներ, որից հետո եպիսկոպոսաց դասն ընդունեց Ս. Մկրտության եւ Ս. Դրոշմի խորհուրդների միօրինակ բնագիրը: Մասնակի փոփոխություններով հաստատվեց Ս. Մկրտության եւ Ս. Դրոշմի խորհուրդների կանոնական ուղեցույցը, որը վերանվանվեց՝ Ս. Մկրտության եւ Ս. Դրոշմի խորհուրդների հովվական ուղեցույց: Որդեգրվեց նաեւ նախամկրտական ուսուցողական ձեռնարկը: Ընդունված փաստաթղթերը Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի տնօրինությամբ կառաքվեն թեմեր առ ի գործադրություն:

Նոյեմբերի 13-ին Եպիսկոպոսաց ժողովը, առաջին նիստի ընթացքում, մասնավոր անդրադարձ ունեցավ Արցախի առաջնագծում ադրբեջանական զինված ուժերի կողմից ԼՂ պաշտպանության բանակի օդուժի ուղղաթիռի խոցման միջադեպին՝ դատապարտելով Ադրբեջանի կողմից սանձազերծված սադրիչ գործողությունները:

Եպիսկոպոսաց դասը աղոթք բարձրացրեց՝ առ Աստված խոցված ուղղաթիռի անձնակազմի զոհված անդամներ մայոր Սերգեյ Սահակյանի, ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանի եւ լեյտենանտ Ազատ Սահակյանի հոգիների հանգստության համար եւ սրտակցություն հայտնեց զոհված հայորդիների ընտանիքներին ու հարազատներին:

Ստեղծված մտահոգիչ կացության առջեւ եպիսկոպոսաց ժողովն իր զորակցությունը հայտնեց ՀՀ եւ ԼՂՀ իշխանություններին՝ հայցելով Տիրոջ խաղաղությունը հայրենի մեր երկրին եւ ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը հանձնարարեցին եպիսկոպոսներին՝ եկեղեցիներում կատարել հոգեհանգստյան արարողություններ զոհված օդաչուների համար: Հանձնարարվեց նաեւ պետական եւ միջազգային լիազոր բոլոր ատյաններում աշխատանքներ իրականացնել՝ կանխարգելելու Ադրբեջանի կողմից ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը խաթարող սադրիչ եւ ռազմատենչ գործողությունները եւ չեզոքացնելու պատերազմի վերսկսման վտանգը:

Նոյեմբերի 13-ի երրորդ նիստին մասնակցեց ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների աշխատանքները համակարգող տիար Վիգեն Սարգսյանը: Վերջինս հանգամանալից ներկայացրեց Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով 2015 թվականին նախատեսվող պետական ծրագրերը՝ անդրադարձ կատարելով Հայ Եկեղեցու հետ Հայաստանում եւ Սփյուռքում համատեղ իրականացվելիք միջոցառումներին: Տեղեկացվեց նաեւ նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

Ժողովի վերջին օրն անդրադարձ կատարվեց նաեւ ազգային-եկեղեցական կյանքում առկա զանազան մարտահրավերներին, Եկեղեցու առաքելության առավել արդյունավետ իրականացման ճանապարհին լուծման կարոտ ծիսական, քարոզչական, կրթադաստիարակչական, սոցիալական խնդիրներին, որոնց հիման վրա ձեւավորվեց առաջիկա Եպիսկոպոսաց ժողովների օրակարգը:

Եռօրյա ժողովի ավարտին եպիսկոպոսաց դասը գոհություն հայտնեց Ամենասուրբ Երրորդությանը՝ եղբայրական համախմբման հնարավորության, ինչպես նաեւ ժողովի բարեհաջող ընթացքի համար: Ժողովականները նաեւ իրենց գնահատանքը հայտնեցին Կենտրոնական, Սրբադասման եւ Ծիսական հանձնախմբերի անդամներին՝ ժողովի նախապատրաստման եւ օրակարգում ընդգրկված հարցերի հանգամանալից ուսումնասիրության համար:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի հայտարարությունը

Գոհություն ենք մատուցում Ս. Երրորդությանը՝ Հորը, Որդուն եւ Ս. Հոգուն, որ շնորհը պարգեւեց՝ 2014 թ. նոյեմբերի 11-13-ին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին Եպիսկոպոսաց ժողով գումարելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, եւ քննարկելու մեր Եկեղեցուն ու ժողովրդին հուզող հարցեր:

Աղոթքով ենք հիշում Հայոց Ցեղասպանության բյուրավոր զոհերին, ովքեր նահատակվեցին վասն հավատոյ եւ վասն հայրենյաց: Հավատում ենք, որ Հայոց Ցեղասպանության անմեղ զոհերի սրբադասումը հոգեւոր նորոգություն եւ միխիթարություն է բերելու մեր ժողովրդի զավակներին: Հորդորում ենք մեր ժողովրդի աշխարհասփյուռ զավակներին՝ գործուն մասնակցություն բերել 100-ամյա տարելիցի ոգեկոչման միջոցառումներին եւ անմեղ զոհերի սրբադասմանը՝ հիշատակի նվիրական արարողությունները դարձնելով քաջալերանք հավատքի ամրության, հոգեւոր կյանքի նորոգության եւ հայ ինքնության պահպանության: Եպիսկոպոսաց ժողովը հրավեր է ուղղում քրիստոնյա ողջ աշխարհին՝ աղոթքով միանալու 2015 թ. Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված հիշատակի արարողություններին՝ հայցելով նաեւ Տիրոջ օրհնությունը աշխարհում արդարության, խաղաղության ու համերաշխության հաստատման եւ մարդկային կյանքը փոթորկող բազում տագնապների ու մարտահրավերների հաղթահարման համար:

Կոչ ենք ուղղում միջազգային հանրությանը՝ վճռականորեն շարունակելու Օսմանյան Թուրքիայի կողմից հայ ժողովրդի դեմ իրագործված՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման գործընթացը: Կոչ ենք ուղղում նաեւ Թուրքիայի Հանրապետությանը՝ ճանաչելու հայ ժողովրդի դեմ գործված Ցեղասպանությունը եւ վերահաստատելու մեր ժողովրդի արդար իրավունքները:

Աղոթում ենք առ Աստված մեր նորօրյա նահատակների՝ Հայաստանի եւ Արցախի սահմանների պաշտպանության հա-

մար զոհված հայորդիների հոգիների հանգստության համար: Դատապարտում ենք Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների սահմաններին մինչ օրս աղրբեջանական կողմի սանձազերծած ռազմական գործողությունները, որոնց ցավալի վերջին դրսեւորումը եղավ նաեւ եպիսկոպոսաց ժողովի գումարման օրերին հայկական ուղղաթիռի խոցումը եւ հայորդիների ողբերգական կորուստը: Աղոթք ենք բարձրացնում զոհված հայորդիների հոգիների հանգստության համար՝ բերելով մեր ցավակցությունն ու զորակցությունը հայրենիքի համար զոհված քաջարի մեր մարտիկների ընտանիքներին: Մեր ժողովրդի արդար իրավունքների եւ պահանջատիրության իրականացման ճանապարհին կարեւոր հանգրվան պիտի լինի Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդարացի եւ խաղաղ կարգավորումը, համաձայն միջազգային նորմերի՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմամբ:

Եպիսկոպոսաց ժողովը նաեւ իր մտահոգությունն է հայտնում աշխարհի տարբեր կողմերում՝ մասնավորաբար Միջին Արեւելքում՝ Սիրիայում եւ Իրաքում, ինչպես նաեւ Ուկրաինայում չդադարող հակամարտությունների առիթով, որ պատճառ են դառնում մարդկային բազմաթիվ զոհերի եւ ավերածությունների: Մեր զորակցությունն ենք բերում հակամարտության գոտիներում բնակվող խաղաղ բնակիչներին՝ այդ թվում եւ մեր ժողովրդի զավակներին, աղոթելով ռազմական գործողությունների շուտափույթ դադարի եւ աշխարհում համընդհանուր ու տեւական խաղաղության հաստատման համար:

«Քրիստոս է մեր Աստուած, եւ մեք յուսամք ի նա» վստահությամբ ու Հայոց Ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակի առջեւ պարտքի գիտակցումով՝ եպիսկոպոսաց ժողովը վերանորոգում է իր սրբազան ուխտը՝ շարունակելու իր նվիրական առաքելությունը՝ հանուն Հայ Եկեղեցու պայծառության, ազգային միասնականության, մեր երկրի զորացման ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության:

Թող Ամենազորն Աստված պահապան լինի մեր Եկեղեցուն, Հայրենիքին եւ Ազգին Հայոց այսօր եւ հավիտյանս, Ամեն:

Եպիսկոպոսաց հաջորդ ժողովը կգումարվի 2016 թվականին:

Ժողովը փակվեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնության ու գնահատանքի խոսքով եւ աղոթքով:

РЕЗЮМЕ

После шестисотлетнего перерыва по инициативе Его Святейшества Католикоса и Верховного Патриарха Всех Армян Гарегина Второго и Его Святейшества Католикоса Великого Дома Киликийского Арама Первого в Первопрестольном св. Эчмиадзине восстановлена священная традиция созыва Собора епископов Армянской церкви (24-17 сентября 2013 г.). Таким образом, отныне Армянская церковь вступила в новый период реформ во славу Армянской церкви и на благо армянского народа.

На Соборе были рассмотрены вопросы восстановления традиции причисления к лику святых Апостольской Армянской церкви, обрядовые, канонические, богословские проблемы, формулировки их определений.

Второй Собор епископов (11-14 ноября 2014 г.) утвердил порядок ритуала и церемонии причисления к лику святых.

Церемонию причисления к лику святых мучеников Армянского Геноцида решено провести 23 апреля 2015 г. в Первопрестольном св. Эчмиадзине, установив день их ежегодного церковного поминовения 24 апреля.

Епископский Собор принял единый образец св. Крещения и св. Миропомазания, утвердил с частичными изменениями пастырское наставление св. Крещения и св. Миропомазания, а также пастырское пособие по подготовке к обряду Крещения. На Соборе были рассмотрены также проблемы и вызовы, стоящие перед нацией и церковью, на основе которых была сформирована повестка дня предстоящего Епископского Собора, который состоится в 2016 г.

SUMMARY

After the interruption of six centuries, the sacred tradition of convening Episcopal Assemblies in the Armenian Church has been reinstated in the Mother See of Holy Etchmiadzin (24-27 September, 2013), presided by His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians and His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia. Thus, the Church has entered a new reformed phase for the prosperity of the Armenian Church and for the welfare of the Armenian nation.

Reinstatement of the canonization tradition in the Armenian Apostolic Holy Church, studies of ritual, canonic, dogmatic issues and definition formulations were main questions.

The second Episcopal Assembly (11-14 November, 2014) approved of the rite and ceremony of the canonization of the Armenian Church.

It was decided to celebrate the canonization ceremony of the Armenian Genocide martyrs on April 23, 2015, in the Mother See of Holy Etchmiadzin, setting April 24 as a Church commemoration day.

The Episcopal Assembly adopted a uniform text for the sacraments of baptism and confirmation, with some amendments approved of the pastoral guide of the sacraments of baptism and confirmation, as well as of the pre-baptismal training manual. The assembly reflected on various challenges existing in the national-ecclesiastical life, and on their basis the agenda of the next Episcopal Assembly was formed, which will be held in 2016.